

« բերդերն ու եկեղեցիներ, որ հիմա աւ-
 « շերակ են, բոլոր անոնց շինածն է.
 « մինչեւ Ութիւի և Կիսկիւմի վրայ իշխաւ-
 « նուիրեն կը բանեցնէին: Ետքը մէկ նգո-
 « ված հայ մը տաճկացաւ ու Յէթի կոչ-
 « վեցաւ, ասկա կամասարենց դէմ նա-
 « խանձ պահելով, զանոնք մեծերուն ու
 « փաշային խամզեց, ինքն ալ կտրտելու
 « շուն մ'էր, անոնց ունեցած արտեր,
 « պարտէզներ և գեղերը քաշեց ձեռքի-
 « րէն առաւ, ու շատ քրիստոնեայք ալ
 « բռնի տաճկացուց: Կամասրենք ալ աս
 « բանին չդիմանալով, փաշայէն հրաման
 « առին ու մնացած քրիստոնէից հետ ի
 « միասին ելան անկէջ ու Հինձը գացին.
 « հոն չիֆթլիկ առին, երկրագործութիւն
 « կ'ընէին: Կամասրենք Հինձը ալ համ-
 « րայ էին: Սահակ քահանա շատ բանի-
 « րուն մարդ մ'էր, նալճիութիւն ալ կ'ը-
 « նէր, անոր համար տաճկներ նալճի
 « Սահակ քահանա ալ կ'ըսէին: Ասոր տղան
 « Աստուտոյր կամ Աստուտմտոյր, կ'ըսէր
 « Հայրս, ես լաւ գիտեմ ու շատ բարե-
 « կամս էր. անանկ լեզուանի ու ճարտար
 « և քաջ մարդ մ'էր՝ որ Տանկի պէկեր իրմէ
 « կը քաշվէին. Աստուած ալ տուաւ՝ շատ
 « յառաջ եկաւ. ասոնց հացը՝ մէյտանն
 « էր, ասոնց դուռներ աղքատաց ու միւ-
 « սաֆիրի համար միշտ բաց էր: Ետք
 « Հայիր ասոր թշնամի եղեր էին, Ֆոանկ
 « է ըսելով, բանտ դնելով ճէրիմէ տալ
 « տուին: Անկէ ետք տուտով քաղաք գնաց,
 « ինքն ալ յերուսաղէմ ուխտ գնաց՝ մահ-
 « տէսի եղաւ, ես ալ զինքն ճերմակ մօրուք
 « տեսայ կ'ըսէր»: Ահա տիրացու. Անաս-
 « տասին պատմութիւնը, որ միւս պատմու-
 « թեանց շատ համաձայն է, որ ալ կաս-
 « կածելու տեղ մը չթողուր: Ի վերայ այսր
 « ամենայնի մենք այս այսպէս ցցընելէն
 « ետքը, դառնանք ուրիշ ճին ծերերու պատ-
 « մովեանց հետեւելով, մեր պատմութեան
 « կարգը շարունակենք մինչեւ մեր օրը:

Հ. Բ. Ս.



Կ Կ Ո Ւ

(Այլիշմի ծննդագրութիւն)

Ողջ էր անասոնի հիւրիկ զեղանի
 Ալընկաւա քարայնոյ,
 Ի զեղ գանազան փայլէն դէմը երկնի,
 Լբան մայրիք զողջոյն քոյ,
 Այն ինչ ամուշկաց փթթեալ է մարմանդ
 Լրեւմ ըզձայնդ անուշակ.
 Միթէ կարագիւտ կամ ասող անվրկանդ
 Լինի քարնան քեզ դուշակ,
 Ընդ քեզ ողջունեմ, հիւր զբարթարեր,
 Էւ ես ծաղկանց զեղանակ,
 Մինչ ի հովանոյս հնչեն ինդ այիր
 Թուռնք զողորմիկ եղանակ,
 Խոտորեալ աղբայն համբակ ընդ անտառ
 Կապել նարոտ երփնունակ,
 Յախորժ ծայնիդ լուր՝ կատաւ կայ ոտնառ
 Փորժէ սոխն քեզ նըմանակ,
 Իսկ յորժամ տեղան երկինք ի ծագկունս՝
 Առեալ զողջոյնդ և խոտեռ,
 Ալեակից Տորոյ՝ նորանոր գարունս
 Դորոց զաշտաց առնես,
 Թուշակ սիրունակ, բայն քո միշտ զաւար,
 Քեզ միշտ պաշտառ են երկնս,
 Յերդոս քո չրկան նըրազ արխարար,
 Էւ ոչ Ձմեռն ի քո տիւս,
 Ո՛հ, ո՛ սայր փետուրս, և ինձ քո նըման
 Ըզճախ անուն թնակից,
 Յերկիր համարէն յայցեւու չըման
 Լինել քարնան ուղեկից:

ԼՅԱՆ

ԳԵՏԻՆ ՄԵՏԻԿ

Հոսիս, հոսիս այդպէս իրողով, ո՛վ Գետակ,
 Փըրփո՛ւր — փըրփո՛ւր մերթ փըշըրէ կարճըզ լոյս,
 Միբթ՝ երազուն կը մենեղեան խորքիդ սակ,
 Դո՛ւ ալ ունիս երազ կամ յուզ ծոցն ալուց:

Ըսէ ինձի, ինչ կը բերես լեռներէն,
 Տըրտմնէ, ծիծմղ, սէր կարասի և կամ վիշտ,
 Ա՛հ, ըսէ՛ այդ ալիքներդ ինչ կը բերեն
 Երբ կը զուռն սարերէն վար լաւով միշտ:

Գիտեմ, զիտեմ անմուկն ունիս մարտերուն...
 Կը թորոքի քու ճակատդ ալ երեւուն,
 Էւ երբ նըստած ափերուդ մօտ կ'ըրազեմ

Ուր կը ճընչէ ջուրիդ մեղմ երգը և իմ,
 Այն պահուն երբ մոռթ մը կ'ըլլաս դու նոսն,
 Քու ալիքդ ինձ կ'ըսէ. — Ե՛իս ալ կը մեռնիմ...»:

ԱՆՍՈՐ